

տիզակի (Նիկոմիդիա). տարիք՝ 41* Այժմ առաջնորդ Պահարմա-Պալքէսիր միացեալ վիճակին:

6. 8. Բաբգէն ծ. վրդ. Կիւլէսէրեան այնթապցի ձեռն. 1895 թ. միաբան Դպրեվանուց Արմաշու, ուսեալ ի ժառանգաւորաց վարժարանի նոյն վանաց. տարիք 42* Այժմ առաջնորդ Հայոց Գաղատիոյ:

7. 8. Զաւէն ծ. վրդ. 8. Եղիոյեան բաղտատցի, ձեռն. 1895 թ. միաբան Դպրեվանուց Արմաշու, ուսեալ ի ժառանգաւորաց վարժարանի նոյն վանաց. տարիք 42* Այժմ առաջնորդ Հայոց Տիգրանակերտի:

8. 8. Սմբատ ծ. վրդ. Սատէթեան աղաբազարցի, ձեռն. 1895 թ. միաբան Դպրեվանաց Արմաշու, ուսեալ ի ժառանգաւորաց վարժարանի նոյն վանաց. տարիք 40* Այժմ առաջնորդ Հայոց Կարնոյ:

9. 8. Թորգոմ ծ. վրդ. Գուշակեան պարտիզակցի, ձեռն. 1896 թ. միաբան Դպրեվանաց Արմաշու, ուսեալ ի ժառանգաւորաց վարժարանի նոյն վանաց. տարիք 37* Այժմ առաջնորդ Հայոց Սեբաստիոյ:

10. Խորէն ծ. վարդապետ Մուրագրէգեան 38 տարեկան, ձեռնագրած 1901 թուին Մայր Աթոռիս միաբան, ուսելէ Թիֆլիզի Ներսիսիան հոգևոր գլուխում, այժմ վոխ - թեմակալ Երևանայ:

Ենորհաւորելով նորապատկ եպիսկոպոսներին իրանց եկեղեցական բարձր աստիճանը կաղօֆենք, որ լինեն մշակ առանց ամօթոյ ի տան Աստուծոյ:

—Վեհ. Հայրապետի հրամանով 8. Մեսրոպ եպիսկոպոսը սեպտեմբերի 18-ին ծայրագունութեան աստիճան տուեց Եփրէմ և Մուրագրէգեան Խորէն վարդապետներին:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԵՇԿԱՍՏԱՆՈՒՄ.

(«Բիւ զանդեռն»)

Ազգային վարչութիւն

—Երկաթուղիների ընկերութիւնը սկսած լինելով զոյգ գիծ շինել, պատրիարքարանը որոշելէ Հանրային շինու-

թիւնների նախորդ նախարարի խոստումը թագրիրով յիշեցնել արդի նախարարին և խնդրել, որ ազգային հիւանդանոցի մօտ էլ կայան շինուի:

— Օգոստոսի 2-ին Սրբազն պատրիարքը Բարձրագոյն գուռն գնալով ներքին Գործերի նախարարի ուշադրութիւնն է հրաւիրել Դօլթ-Եօլի, Մշոյ և այլ գաւառների հայ ժողովրդի հարստահարուած և վրդավեալ վիճակի վերայ նախարարը խօստացել է ամեն հնարաւոր միջոցները գործ գնել անդորրութիւն հաստատելու և յանցաւորները խիստ պատժելու համար:

Երուսաղեմայ գօրծեր.

Դատական նախարար Նէմմէդդին պէյի Եւրոպայից վերադառնալու առիթով Սրբազն պատրիարքը այցելել է նրան, ի միջի այլոց հարցրել է Եղդի-Գուլէի, Երուսաղէմի հայ վանքին պատկանող, գետնի խնդրի մասին. նախարարը պատասխանել է, որ այդ գետնի վերայ կենդրոնական բանալը պէտք է շինուի, բայց եթէ վանքի սեպհականութիւնը հաստատուի ապացուցական գրերով, փոխարէնը կը վճարուի. Սրբազն պատրիարքը յայտնել է, որ ամեն արձանագրութիւններն ու վաւերական գրերը կան, ցոյց տալու և համոզելու համար, որ այդ գետինը վանքին է պատկանում, բայց կառավարական Առեանները չեն լսում ազգի բողոքի ձայնին:

— Երուսաղէմի պատրիարքական տեղակալ Տ. Դանիէլ վարդապետն ու վարչական պատուիրակը ներքին մի կանոնադրութիւն անհրաժեշտ էին գտել, Վարչութիւնը յանձնել էր մի մասնախմբի վանական կանոնագրի մի ծրագիր կազմել, որովհետեւ ցարդ նոյն աշխատութիւնը լրացած չէր, որոշուեց հրաւիրել մասնախմբի անդամներին փութացնել իրենց տեղեկագիրը:

Խառն ժողով

Օգոստոսի 4-ին Ղալաթիոյ խորհրդարանի մէջ Սրբազն պատրիարքի նախագահութեամբ գումարուել է խառնժողով, որ զբաղուել է հետեւեալ խնդիրներով.

Լսել է Թաթոււլ վարդապետ Դուրեանի զեկուցումն

Գոնիայի վիճակի կաղմակերպութեան և տեղւոյն գործերի մասին ժողովը գոհ մնաց Թաթուլ վարդապետի կատարած աշխատութեան համար։

—Որովհետեւ Տ. Յովսէփ արքեպիսկոպոս Արածեանը ֆրեզնոյից յայտնել էր, թէ Վանայ գաւառական վարչութեան խնդրանաց և Վեհ. Հայրապետի հրամանին համաձայն յանձն է առնում Վանայ հոգեոր հովուի պաշտօնը, ժողովը գոհ մնաց Սրբազանի յանձնառութեան համար, և յանձնեց իւր Սրբազան նախագահին ճանապարհածախքի համար հարկաւոր կարգադրութիւններն անել։

—Աթէնքի թաղ. Խորհուրդը յայտնել էր, որ Եկեղեցու շինութիւնից 5000 ֆրանք տոկոսաբեր պարտքը վճարելու թէե որոշուած է կենդր. վարչութիւնից հանգանակութիւն անել, բայց տոմար չէ տուած։ —Ժողովը որոշեց յանձնաբարել թաղ. Խորհուրդին մի ներկայացուցիչ նշանակել ժապաւինեալ տումարը ստուգելու համար։

—Ժողովը Պարգև էֆ. Փափազեանի տեղ Հայկ էֆ. Խոճասարեանին ընտրեց պատրիարքարանի դիւանաների վերակազմութեան մասնաժողովի անդամ։

Դ. Կրօնական ժողով։ — Համագումար ժողով

—Կրօնական ժողովի յուլիսի 28-ին նիստի մէջ օրոշուել է սեպտեմբերի 14-ին երեքշաբթի օրը համագումար ժողով հրաւիրել զբաղուելու Եկեղեցական բարեկարգական այն հարցելով, որոնք անցեալ նիստին ներկայացուել են Գնել վարդապետի կողմից մի քանի քահանաների ստորագրութեամբ։ —Անշուշտ, ժողովը հրահանգուելով Վեհ. Հայրապետի այն բացորոշ յայտարարութեամբ, թէ Հայաստանեայց ո. Եկեղեցու դաւանութիւնը որ և է առիւթով կամ ժողովի մէջ չի կարող խնդրի առարկայ դառնալ, ժողովը կը զբաղուի Եկեղեցու արտաքին և վարչական բարեկարգութեան խնդրիներով և իւր Եղբակացութիւնը, ինչպէս ինքն Կրօնական ժողովն էլ որոշել է, կառաջարկի Վեհափառ Հայրապետին որի հաւանութիւնն ու հաստատութիւնը, իրեւ Եկեղեցու ընդհանրական պետի, անհրաժեշտ է։

Կրօն. Ժողովոյ երէկուան (յուլ. 28) նիստին մէջ որոշուեցաւ եկեղեցական համագումար ժողով հրաւիրել սեպտեմբեր 14, երեքշաբթի օրը, զբաղելու համար այն եկեղեցական բարեկարգական հարցերով, որոնք անցեալ նիստին ներկայացուած էին Տ. Գնէլ ծ. վ -ի կողմէ և քանի մը բերանացի բացատրութիւններ պիտի տայ, և պիտի լսէ վեհ. Կախմողիկոսին տեսութիւններն այս բարեկարգական խնդիրներուն մասին։ Համագումարը նիստ պիտի ընէ Ղալաթիոյ Խորհրդարանը։

Քիւլգանդիոնում կարդում ենք—«Յունաց Սէնօդի հայագէտքարտուղար Եօաքիմ Արօնլիտիս Հայ Եկեղեցւոյ բարենորոգուամի առաջարկին առթիւ հետեւետլը կդրէ Պատրիարքարանի էկլիպիասթիքի Ալիքիա պաշտօնաթերթին մէջ։—«Հայկական քոյք Եկեղեցին այս օրերս կյուղուի բարենորոգուամի հարցով մը։ Հայ Ազգը անտանելի կերպով ճնշուած էր բանապետութեան լուծծին տակ։ Ցլու 10-ին, երբ տապալեցաւ բռնապետութիւնը, արմատական գաղափարներ ազատ մուտք գտան Հայոց մէջ և այնքան տառապանքներէ և զոհերէ եաք, Հայերը յուստահատանձնատուր եղան և որդեգրեցին ամէնէն արմատական գաղափարները։ Ու այսպէս, Արարտակ լերան դագաթը, և ծիւներու տակ թաղուած լեռներու վրայ բնակող ամէնէն պահպանողական Հայ ժողովուրդն այսօր բարենորոգուամի և հասարակային կազմակերպութեան ամէնէն թունդ ու բուռն գաղափարով տոգորուած կներկայանայ։ Ու սակայն Հայոց Դաշնակցական քօմիթէին այդ արմատական գաղափարները չպիտի ընդունի Ֆրանսոս իսկ, որ մայր հայրենիքն է ազատական և ապշեցուցիչ նորութիւններու։

«Զափազանց ճնշումին հետեւանքը պայթում է թէև, սակայն Անատօլուն պատրաստուած չէ տակաւին այդքան ցաւառիթ միբարբուժական գործոգութեան մը։ Յայտնի է, որ Անատօլուի ազգու կեանքը շաղկապուած է Եկեղեցականին հետւ Ազգային տեսակետով բարեփոխում մը, նորութիւն մը՝ Եկեղեցին վրայ կազդէ։ Սակայն Եկեղեցին բարեփոխումի պատշաճ և արգեւնաւոր գետին մը չէ։ Այս պատճառով, մտադրուած բարեփոխումները չեն կրնաք մեծ արժէք մը ունենալ։ Եկեղեցի վարդապետութեան գաւանական մասն անփոփոխելի է։ Ծէսերը և քաղաքային օրէնքները, գլխաւորաբար ընտանեա-

կանները կընան բարեփոխուիլ: Նկատի առնելով որ Հայերը զրկուած են չոտմէական և Ծիւղանդական օրէնքներուն ընձեռած բարեքներէն, մինչ մենք Յոյներս մեր ներքին յարաբերութեանց և գործառնութեանց համար միշտ կքաղենք այդ օրէնքին աղբերներէն և Հայկ, եկեղեցին իր տեղական դիմքին ըեւումով, Արևմտեան վերանորոգիչ ազգեցութենէն հեռու և Օրթոսոքս եկեղեցին հետ ունեցած հերծուածէն ետք միշտ անփոփոխ մնացած է, ընտկան է, որ այս կացութիւնը չդոհացներ մեր Հայ եղբայրներն, որ բարեփոխութեան պէտքն զգացին»:

Քաղաքական ժողով

— Յուլիսի 30-ին գումարուել է Քաղաքական ժողովը Հալաթիայի խորհուարանի մէջ: Ժողովը մերժել է 1, գոքտ. Թորգոմեանի և Յ. Պահրի էֆէնդիների հրաժարականները և հրաւիրել է գործակցել ժողովին, որի պաշտօնավարութեան շրջանը լրանալու մօտ է: 2, Ուղղութոյի վիճակից աղդ. Երեսփոխան ընտրուած Հայրիկեան Արքահամ էֆէնդիի հաւատարժաժղթերը ստուգելով, որոշել է տեղեկագրել աղդային ժողովին: 3, Դորք-Եօլի առաջնորդական փոխանորդը հեռագրած լինելով՝ որ շրջակայքում մի անձն սպանուած և երկուսն էլ վիրաւորուած լինելուն պատճառով ժողովուրդը ահ ու սարսափի մէջ է—Ժողովը յանձնեց իւր Արքազան նախագահին հարկաւոր դիմումներն անել: 4, Արամեան վարժարանի խնդիրը լուսաբանելու համար յանձնարարեց Հալաճեան և Սուին էֆէնդիներին, որ դնան Գատը-գիւղ և թաղական խորհրդի հետ խորհրդակցելով ու տեղական քննութեամբ ստուգեն խնդրի վիճակն և տեղեկագրեն Քաղաքական ժողովին: 5, Ժողովը նկատելով, որ իւր պաշտօնավարութեան շրջանը մօտենում է, որոշեց յանձնարարել տեսուչ խորհրդարանին, որ իրանց գործառնութեան համարաւութիւնը ըստ օրինի պատրաստի և յանձնի Վարչութեան: 6, Ժողովը յանձնարարեց իւր Արքազան նախագահին Սամաթիայի թաղական նորընտիր ժողովը ի պաշտօն հրաւիրել: 7, Որոշեց Հայ դինուրներին, որքան և տեի նրանց այդ ծառայութիւնը, պղատ կացուցանել աղդային տուրք վճարելու պարտականութիւնից և որոշեց այս մասին հարկ եղած հրահանգը

տալ Տնտեսական խորհրդին ի գործադրութիւն, 8, Որոշեց
թ. Ալփիար էֆէնդօւն ճանաչել ֆրանսերէնի քարտուղար,
և այս մասին տեղեկութիւն տուեց Տնտեսական խորհրդին.

—Հիսարի վարժարանը մօտ օրերս պէտք է վերաշի-
նուի. հարկաւոր գումարի, որ մօտ 300 ոսկի է ենթադրուում,
մեծ մասը պատրաստ է: Արդիւլ-Համիդ սուլթանի որդին,
որ Հիսարումն է ապրում, ուղարկելով 15 ոսկի, յայտնել է
որ, եթէ պատրաստուած լըլինէր պալատ գնալ, անշուշտ-
ներկայ կը լինէր դպրոցի տարեկան հանդիսին:

Թաւառային զարձեւ.

—Մատթէսս վարդապետ Ինձէեան, որ Զմիւռնիայի-
առաջնորդ է ընտրուած յունիս 25-ին Ենի-Մահլէի սուրբ
Կարտպէտ եկեղեցում ծայրադոյն վարդապետութեան
աստիճան է ստացել Սրբազնն պատրիարքից, այնուհետեւ
յունիսի 31-ին ուղեկորուել է իւր պաշտօնատեղին և սկսել է
իւր պաշտօնի վերաբերեալ դործերը վարել:

—Ադրիանուպոլսոյ առաջնորդական ընտրութեան տես-
զեկագիրը յուլիսի 27-ին հասել է պատրիարքարան, որից
երեացել է, որ առաջնորդ ընտրուել է Տ. Արսէն ծ. վար-
դապետ Վեհունին:

—Կրօնական ժողովը իւր վերջին նիստին մէջ որոշել է.

Օմուսնական կանոններ

Ա. ամուսնութիւնից առաջ երկօւստեք բժշկական
վկայական պահանջել, Բ. ճիւղահամարի, հասի չհասի որոշ
կանոններ և օրէնքներ սահմանել, Գ. ամուսնալուծման
զանազան պարագաները ճշդող բացորոշ մի օրէնք խմբա-
գրել և այլն: Ժողովը որոշեց գաւառներից եկած ամուս-
նական և ամուսնալուծական խնդիրները իրենց առաջնորդ-
ներին յետ դարձնել, սահմանադրութեան ապակենգրու-
նացումի սկզբունքի համաձայն վերջնական կարգադրու-
թիւնը նրանց կողմից լինելու համար, եթէ պէտք եղած
օրինական քննութիւնները կատարուած են, խոստովա-
նութիւնները լսուած, փաստերը զննուած և հրապարա-
կացին յայտնութիւնները եղած են:

—Ամուսնական կանոնները, Հայրապետական կոնդակներն
և ժողովներու որոշումները քննութեան առնելով, նոր ամուս-
նական կանոն մը պատրաստելու ձեռնարուած ըլլալով, փո-

իանոքարտան սկսած է դառաւորել 40—50 տարուան միջոցին Պատրիարքայան եկած զատերու վիճակն և ստացուած լուծծումները։ Այս քննութենէն երևան եկած է որ կէս զարու շրջանի մը մէջ այբերու կողմէ 37 տեսակ դատ բացուեր է իրենց կիներուն գէմ, իսկ կիներու կողմէ ալ 39 տեսակ, իւրաքանչւր տեսակէ կորդ մը զատեր ըլլալու պայմանաւ։ Ասոնք զասաւորուելէ յետոյ յանձնաժողովը քննութեան պիտի սկսի և իր աշխատութեան արգիւնքը պիտի ներկայացնէ կըօն. Ժողովին, քննութեան համար։

Հայ կաք. Եկեղեցի.

Հայ. Հոռվմէականների պատրիարք Թերզեան Սրբադանը վարչական ժողովի որոշմամբ դիմում է արել քաղաքապետ Սուպհի-բէլին պնդելով թէ Հայ Հոռվմէականները մասն ունեն Պանդալթիի հին գերեզմանատան մէջ։ Քաղաքապետը փափագ է յայտնել, որ այդ մասին Հայք և Հայ Հոռվմէականները իրաւախոհ լինեն։ Հայ պատրիարքարանը, հիմնուելով կառավարութեան ընդունած սկզբանքի վերայ, թէ իրաւատէր մեծամասնութիւնն է, պնդում է, որ Հայ Հոռվմէականները այդ գերեզմանատան վերայ, որպէս հատուածեալ և օտարացած փոքրումասնութիւն, իրաւունք չունեն։ Պատրիարքարանը պէտք է առաջարկի որ 16—17 տարի առաջ քաղաքապետութեան մէջ կողմուած յանձնաժողովի աշխատութիւնները երեան հանուեն, որի վերայ ինքն աւելացնելու բան չունի։

Խոդիրը յանձնուած է պետական խորհրդի ուշադրութեանը։

Հայ բողոքական Եկեղեցի.

(Բիւզանդիոն)

Յուլիսի 10-ին Քանլըրի բողոքական Եկեղեցու մէջ կրօնական պաշտամունքից յետոյ մի ժողով է եղել որոշշելու, թէ կիրակնօրեայ դպրոցի լեզուն, թէ մեծերի և թէ փոքրերի համար Հայերէն պէտք է լինի, թէ անգլիերէն, երկար քննութիւնից յետոյ ժողովը որոշել է, որ Եկեղեցին պաշտամանց լեզուն իր բոլոր ճիւղերով Հայերէն ըլլայ։ Եղել են առարկողներ, որ «Եթէ ամերիկացիք գիտնան, որ մենք կմերժենք անգլիերէն սովորիլ, կրկին մեղ քաղաքացիութենէ պիտի հանեն»։ Անգլիերէնի պաշ-

պան մի կին ասել է. «Ոչ լեզու կուղենք, ոչ ազգ, այլ ճշմարիտ կրօնք»։ Հուսկ ուրեմն որոշուել է. «Եղուն հայերէն պէտք է ըլլայ»։

Յարգելով հանդերձ խղճի աղատութիւնը, ցաւելով պէտք է ասենք, որ այլադաւան հայերի մէջ լեզուի խընդիրը, որ ազգային գործօններից առաջինն է, վէճի առարկայ է գառնում. իսկ ազգային աւանդութիւններն ու սուփորութիւնները, որ մի ժողովրդի յատկանիշներն են, ոտնակոխ են լինում լռելեայն, անզգալի կերպով։

Օ ՑԱՐ ԵԿԵՂԵՑԻ

ՈՌԻՍ ՊՐԱԽՈՍ. ԵԿԵՂԵՑԻ

Բացի գպրոցական, և այլ վարչական բարեկարգութեան խնդիրներից, այժմ ոռւս հասարակութիւնը շահագրգռուած է եկեղեցու վերաբերութեամբ երկու խնդրով էլ. առաջինը, տեղական պրաւուլաւ ժողով գումարելու խնդիր, երկրորդը, եպիսկոպոսացուների պատրաստութեան, տարիքի և նրանց նշանակուելու խնդիրը։

Համառուսական եկեղ. ժօղով

Առք. ԵՇԵՏ. (№ 32) տեղական պրաւուլաւ ժողովը կարեոր է համարում եկեղեցու թուլացած աղքեցութիւնը ամրապնդելու համար, կարգաւորել մի քանի խնդիրներ, որ առաջ են եկած իրու ժամանակի անխուսափելի ըերմունք։ Լրագիրը ասում է, որ ժողով գումարելու հակառակ կարող են լինել նրանք, որոնք կը կամենային՝ որ եկեղեցին կորցնելով իւր բարոյական աղքեցութիւնը թուլանար և կազմալուծուէր. այդպէս կամեցօղները եկեղեցու յայտնի հակառակորդներն են. և այդ բնական է։ Ժողով գումարելուն հակառակ են նաև եկեղեցական անարժան գործիչները, նրանք վախենում են ժողովից, որպէս անաշտու գատաւորից. գրանք իրանց վախը չեն կարողա-